



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 28 » հունվարի 2018 թվականի N 21/2

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ
ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթացի
վերաբերյալ կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն
հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/12 և 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 13/4 որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 300 – Կատարողականի աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտի համաձայն:

Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիրուխյանը: Հաշվեքննության ողջ ընթացքում հաշվեքննողներին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ցուցաբերվող աջակցության ծրագրի շրջանակներում հրավիրված Բրեմենի հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության պատասխանատու-ղեկավար Յենս Գյուզեի կողմից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Դեղատնային գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն

1.1. ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի **համաձայն, դեղատնային**

գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն:

Դեղատնային գործընթացի լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման 3-րդ հավելվածի և ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ 58-Ն հրամանի համաձայն:

Դեղատնային գործունեության լիցենզիաները տրամադրվել են ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության կողմից:

ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1319-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կանոնադրությունը: Գործակալությունն իր նպատակի իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- լիցենզիաներ տալու, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված գործառույթների իրականացում,
- լիցենզավորման պարտադիր պահանջների ու պայմանների փոփոխման և արդիականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,
- առողջապահության ոլորտի լիցենզավորման գործընթացի փաստաթղթաշրջանառության իրականացում, այդ թվում՝ լիցենզավորման համար ներկայացված հայտերի ու բոլոր տեսակի անհրաժեշտ փաստաթղթերի ընդունում, հաշվառում և մուտքագրում,
- հանձնված փաստաթղթերի ամբողջության ստուգում, իսկ թերությունների հայտնաբերման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և այլ

իրավական ակտերով սահմանված ժամկետներում հայտատուների՝ պատշաճ ձևով տեղեկացում,

- առողջապահության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի գործավարության իրականացում, հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, լիցենզավորման վերաբերյալ կարծիքների հավաքագրում, ամփոփում և դրանք լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը,
- լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունների հաշվառում, վերլուծություն և գնահատում:

Դեղատնային գործունեության լիցենզավորման համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. լիցենզիա ստանալու մասին հայտ,
2. լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն,
3. իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճեն:

Բացի վերոնշյալ փաստաթղթերից լիցենզիա ստացած անձը, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման 3-րդ հավելվածի N 43.1 կետի համաձայն, գործունեությունը սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում դեղատանը կամ

Լիցենզավորման նպատակը

դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային

պայմանագրի պատճենները:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լիցենզավորման նպատակն է անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը:

Ընդհանուր առմամբ, նշված խնդիրները (հսկողության իրականացումը) պետք է և կարող էին կանոնակարգվել լիազոր մարմնի կողմից¹, քանի որ նրա

¹ Լիազոր մարմինը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարությունը

կառուցվածքում ներառված են եղել *լիցենզավորման գործակալությունը* և *առողջապահական պետական տեսչությունը*, որը վերակազմակերպվել է առողջապահական տեսչական մարմնի (գործել է մինչև 30.06.2018թ.-ը), որոնց կանոնադրություններով նրանց վերապահվել է հետևյալ գործառույթները՝

- համաձայն *լիցենզավորման գործակալության կանոնադրության* 8-րդ կետի 7-րդ ենթակետի՝ գործակալությունը իրականացնում է *լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունների հաշվառումը*, վերլուծությունը և գնահատումը (ՀՀ կառ. 30.09.10թ. թիվ 1319-Ն որոշում),
- համաձայն *առողջապահական պետական տեսչության կանոնադրության* 8-րդ կետի 3-րդ ենթակետի՝ *առողջապահության բնագավառում լիցենզավորված անձանց կողմից տվյալ գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ ստուգումների իրականացումը* (ՀՀ կառ. 25.07.13թ. թիվ 857-Ն որոշում),
- համաձայն *տեսչական մարմնի կանոնադրության* 11-րդ կետի 14-րդ ենթակետի՝ *տեսչական մարմինը՝ իր իրավասության սահմաններում իրականացվող վերահսկողության արդյունքում հայտնաբերված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների և պայմանների խախտումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է լիցենզավորող մարմիններին* (ՀՀ կառ. 27.04.17թ. թիվ 444-Ն որոշում):

Դեղատնային գործունեության լիցենզիաները տրվում են անժամկետ՝ օրենքով և կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում: Լիցենզիա ստանալու համար գանձվում է պետական տուրք 50.0 հազ. դրամի չափով, իսկ այլ վայրում ևս դեղատնային գործունեություն իրականացնելու համար գանձվում է պետական տուրք 25.0 հազ. դրամի չափով:

1.2. Հաշվեքննության նպատակը

Կատարողականի հաշվեքննության նպատակն է՝ գնահատել *լիցենզավորման գործընթացի կազմակերպման և իրականացման որակը*: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

- ✓ արդյոք անհրաժեշտ է բարելավել ներքին գործընթացները,

- ✓ օգտագործված են արդյոք տեղեկատվության հավաքման բոլոր հնարավորությունները,
- ✓ արդյոք բավականաչափ օգտագործված են տեխնիկական միջոցները (օրինակ՝ տվյալների բազաներ),
- ✓ արդյոք առկա են կարգավորման բացթողումներ, որոնք դժվարացնում են ստանդարտացված լիցենզավորման գործընթացները:

1.3. Հաշվեքննության ծավալը

Հաշվեքննվող ժամանակաշրջանում տրամադրվել են միայն դեղատնային կրպակի գործունեության լիցենզիաներ: Ընդհանուր առմամբ տրամադրվել են 410 լիցենզիաներ:

2017թ.-ին կասեցվել են 4 կազմակերպությունների լիցենզիաներ, որից 3-ը՝ իրենց դիմումների համաձայն, 1-ը՝ վարչական վարույթի արդյունքում, իսկ 2018թ.-ին՝ 4 կազմակերպությունների լիցենզիաներ՝ կրկին իրենց դիմումների համաձայն:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է 410 լիցենզավորման գործեր՝ հետևյալ պարունակությամբ՝

1. լիցենզիա ստանալու մասին հայտերը,
2. լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենները,
3. իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները,
4. համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի տվյալները,
5. համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը,
6. փաթեթներում առկա դեղագետի կամ դեղագործի աշխատանքային պայմանագրերը:

2017-2018թթ. ընթացքում 51 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը մերժվել են՝ հայտի և գույքային հագեցվածության՝ ՀՀ կառավարության 2002թ. հունիսի 29-ի թիվ 867 որոշմամբ սահմանված ՀՀ դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգի

պահանջներին չհամապատասխանելու համար: Մերժված 51-ից՝ 9-ը գտնվում են Երևան քաղաքում, իսկ մնացածը 44-ը՝ ՀՀ մարզերում:

01.11.2018թ.-ի դրությամբ մերժված 51 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերից 12-ը նորից չեն դիմել լիցենզիա ստանալու համար, իսկ 39 իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր մերժվելուց հետո կրկին ներկայացրել են հայտեր և լիցենզավորվել:

ՀՀ կառավարության 29.06.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված դեղատնային գործունեության լիցենզավորման կարգի 11-րդ կետով սահմանվել է, որ «լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է **ընտրանքային ուսումնասիրության միջոցով**, որի արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն: Ընտրանքային ուսումնասիրության անցկացման կարգը սահմանում է լիազոր պետական մարմինը»:

Լիցենզավորման կարգի նշված կետի պահանջով ՀՀ առողջապահության նախարարի կողմից 03.09.2014թ.-ին ընդունվել է «Ընտրանքային ուսումնասիրության կարգը սահմանելու մասին» թիվ 58-Ն հրամանը (ուժի մեջ է 11.10.14թ.-ից): Ըստ այդ կարգի՝

- ընտրանքային ուսումնասիրությունն իրականացվում է **համակարգչային պատահական ընտրության** միջոցով (2-րդ կետ),
- ընտրանքային ուսումնասիրությունը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանի հիման վրա, նշելով՝ ուսումնասիրության նպատակը, իրականացման վայրը, ժամկետը և այլն,
- ընտրանքային (տեղում) ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովը կամ աշխատակիցը ուսումնասիրում է լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտում և կից փաստաթղթերում նշված տեղեկությունների իսկությունը՝ **օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայությունը**, և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն:

Լիցենզավորող հանձնաժողովի կողմից մերժվելուց հետո հայտատուներն ընդգրկվել են ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. թիվ 59-Ն հրամանի համաձայն 20% չստուգվածների ցանկում և լիցենզավորվել:

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրելով 01.01.2017-01.11.2018թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված լիցենզավորման գործընթացները, պետք է նշել, որ լիազոր մարմինը համակարգչային պատահական ընտրությունները իրականացնում է

համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով՝ ըստ խաղարկությունների, և յուրաքանչյուր խաղարկությանը մասնակցած ընդհանուր հայտերի թվից 80%-ի մոտ իրականացվում են ընտրանքային տեղում ուսումնասիրություններ, իսկ 20%-ի մոտ տեղում ուսումնասիրություն **չի իրականացվում**, վերջիններիս մոտ իրականացվում են միայն փաստաթղթային ուսումնասիրություններ:

Հարկ է նշել նաև, որ տեղում ուսումնասիրվող **80% չափի** և չուսումնասիրվող **20% չափի** հարաբերակցության սահմանման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից որևէ իրավական հիմնավորում (նորմատիվ ակտ և այլն) չի ներկայացվել²: Լիցենզավորող հանձնաժողովի կողմից **մերժվելուց հետո հայտատուներն** ընդգրկվել են ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. թիվ 59-Ն հրամանի համաձայն 20% չստուգվածների ցանկում և լիցենզավորվել:

Ուսումնասիրելով լիցենզավորման գործերը՝ պարզվեց, որ 410 լիցենզառուներից 159-ը չէին ներկայացրել աշխատակիցների մասին տվյալներ

2. **Հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն և տրամադրվել լիցենզիա այն դեպքում, երբ ընկերությունը չի համապատասխանել լիցենզավորման պայմաններին և երկու անգամ էլ ստացել է բացասական եզրակացություն:**

3. ՀՀ կառավարության 2002թ.-ի հունիսի 29-ի թիվ 867 որոշման 3-րդ հավելվածի 43.1 կետի համաձայն՝ գործունեությունը սկսելուց

առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիցենզիա ստացած կազմակերպությունը լիազոր մարմին է ներկայացնում դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան

² ՀՀ առողջապահության նախարարի 03.09.2014թ. թիվ 59-Ն հրամանի համաձայն, 2017թ-ին 20% չստուգվածների ցանկում ընդգրկվել են 22 իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր, 2018թ.-ին՝ 35 իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր:

որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները: **Ուսումնասիրելով լիցենզավորման գործերը՝ պարզվեց, որ 410 լիցենզառուներից 159-ը չէին ներկայացրել աշխատակիցների մասին տվյալներ (հավելված 1), ինչը ենթադրում է, որ այդ 159 լիցենզառուները դեղատնային գործունեություն չեն իրականացրել: Սակայն ընտրանքային կարգով ՊԵԿ-ի համապատասխան տեղեկատվական համակարգի համադրումից պարզվեց, որ այդ ընկերությունները աշխատում են և իրականացնում են դեղատնային**

Չեն իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումները

գործունեություն: Հետևաբար, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի, վերոնշյալ կազմակերպությունների լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել:

4. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 2-րդ կետով հաստատված՝ *Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների* աղյուսակի պահանջի՝ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից դեղատնային գործունեության տեսակի համար սահմանվել է, որ նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տալու համար կարող է իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում:

Հիմք ընդունելով օրենքի պահանջները, ՀՀ կառավարության 29.02.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի 5-րդ կետով սահմանվել է, որ **«Դեղատնային գործունեության իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»** (նշված դրույթն ուժի մեջ է մտել 15.01.2013թ.-ից, ՀՀ կառավարության 20.09.2012թ. թիվ 1239-Ն որոշում):

Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարությունը 15.01.2013-01.11.2018թթ.. ընթացքում լիցենզավորման գործընթացներն իրականացրել է անտեսելով և չկատարելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 2-րդ կետի (որակավորման պահանջի մասով), 13 հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև՝ 14-րդ հոդվածի պահանջները՝ մասնավորապես.

- **Ֆիզիկական անձանց որակավորումը ստուգում են համապատասխան լիցենզավորող մարմնի կողմից սպեղծված որակավորման հանձնաժողովները...**

- Որակավորման հանձնաժողովների կազմավորման կարգերը և կանոնադրությունները հաստատում են լիցենզավորող մարմինները...
- Որակավորման ստուգումը պետք է իրականացվի լիցենզավորման համապատասխան կարգը հաստատելու իրավունք ունեցող մարմնի հաստատած որակավորման կարգին համապատասխան...
- Որակավորման կարգերը պետք է կազմվեն մանրամասն, պարզ և չպետք է սահմանեն դրույթներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն... և այլն:

Նշված ժամանակաշրջանում ՀՀ առողջապահության նախարարության կողմից չի կատարվել նաև ՀՀ կառավարության 29.02.2002թ. թիվ 867-Ն որոշմամբ հաստատված Լիցենզավորման կարգի հավելված 3-ի 5-րդ կետի պահանջները:

Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարությունը 01.01.2017-01.11.2018թթ.. ժամանակահատվածում դեղատնային գործունեության տեսակի լիցենզավորման գործընթացներն իրականացրել է ՀՀ օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան, որի արդյունքում չի իրականացրել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումները:

5. Հաշվեքննությամբ պարզվել են դեպքեր, երբ փաստաթղթերով որպես վարձու աշխատակից ներկայացրած անձինք միաժամանակ աշխատել են տարբեր կազմակերպություններում՝ համապատասխան աշխատավարձերով և միևնույն ժամային գրաֆիկներով, սակայն, ըստ ՊԵԿ տեղեկատվական համակարգի, տվյալ անձինք այդ աշխատանքային պայմանագրերով ընդհանրապես չեն աշխատել՝ աշխատել են բոլորովին այլ կազմակերպությունում:

Միևնույն անձանց մասով ներկայացված աշխատանքային պայմանագրերում ստորագրություններն էապես տարբերվում են միմյանցից, իսկ նշված հեռախոսահամարները գոյություն չունեն

6. Առկա են դեպքեր, երբ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը լիցենզավորման համար ներկայացրել են համապատասխան որակավորում ունեցող միևնույն անձանց տվյալները, որոնք ունեցել են որակավորում

պահանջող համապատասխան փաստաթուղթը (դիպլոմը), բայց այդ անձանց մասով ներկայացված տարբեր աշխատանքային պայմանագրերում առկա են տարբեր անձնագրային տվյալներ և հաշվառման հասցեներ: ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունից ստացված տվյալների համաձայն՝ կնքված աշխատանքային պայմանագրի մեջ նշված որոշ անձնագրային տվյալներ գոյություն չունեն: Հատկանշական է, որ միևնույն անձանց մասով ներկայացված

աշխատանքային պայմանագրերում ստորագրություններն էապես տարբերվում են միմյանցից, իսկ նշված հեռախոսահամարները գոյություն չունեն:

7. Հաշվեքննությունից պարզվեց նաև, որ որոշ իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցներ կնքել են աշխատանքային պայմանագրեր անձանց հետ, որոնց մասով սակայն ներկայացրել են այլ անձանց դիպլոմների տվյալներ:

Պարզվել են դեպքեր, երբ որակավորում ունեցող անձը դուրս է եկել աշխատանքից, իսկ անհատ ձեռնարկատերը կամ կազմակերպության ղեկավարը այդ մասին չի տեղեկացրել լիցենզավորող մարմնին:

8. Հաշվեքննությամբ պարզվել են դեպքեր, երբ համապատասխան որակավորում ունեցող անձը դուրս է եկել աշխատանքից՝ համաձայն ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների, իսկ անհատ ձեռնարկատերը կամ կազմակերպության ղեկավարը

մասնագիտական որակավորում ունեցող անձանց փոփոխության մասին չի տեղեկացրել լիցենզավորող մարմնին: Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի՝ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել՝ լիցենզավորված անձի կողմից օրենքով նախատեսված դեպքերում փոփոխությունների մասին լիցենզավորող մարմնին ժամանակին չհայտնելու կամ օրենքով սահմանված դեպքերում անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորվող մարմին ժամանակին չներկայացնելու դեպքերում:

Ծանոթություն՝ Հաշվեքննության ընթացքում հայտնաբերված վերոգրյալ փաստերը պարունակող արձանագրությունները, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Վերջինիս կողմից որոշ փաստերի վերաբերյալ ներկայացվել են բացատրություններ, որոնք կցված են հավելված 2-ում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1 Լիազոր մարմնի կողմից պատշաճ կերպով չեն իրականացվել լիցենզավորման գործընթացի (ինչպես՝ լիցենզիայի տրամադրման, այնպես էլ՝ գործող լիցենզիաների մասով) նկատմամբ հսկողական մեխանիզմներ:
- 2 Լիազոր մարմնի կողմից կիրառված ընթացակարգի համաձայն, լիցենզիայի տրամադրման ստուգաճշտումների շրջանակներից դուրս են մնում հայտատուների շուրջ 20 տոկոսը, որի չափի սահմանման համար չկա որևէ իրավական հիմնավորում:
- 3 410 լիցենզառուներից 159-ը չէին ներկայացրել աշխատակիցների մասին տվյալներ, ինչը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, վերոնշյալ կազմակերպություններին տրամադրված լիցենզիայի գործողության կասեցման հիմք կարող է հանդիսանալ:
- 4 Չեն իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումներ:
- 5 Արձանագրվել են դեպքեր, երբ փաստաթղթերով որպես վարձու աշխատակից ներկայացրած անձինք միաժամանակ աշխատել են տարբեր կազմակերպություններում, սակայն, ըստ ՊԵԿ տեղեկատվական համակարգի, տվյալ անձինք այդ աշխատանքային պայմանագրերով ընդհանրապես չեն աշխատել՝ աշխատել են բոլորովին այլ կազմակերպությունում:
- 6 Առկա են դեպքեր, երբ լիցենզավորման համար ներկայացվել են համապատասխան որակավորում ունեցող միևնույն անձանց տվյալները, որոնք ունեցել են որակավորում պահանջող համապատասխան փաստաթուղթը՝ դիպլոմը, բայց այդ անձանց մասով ներկայացվել են տարբեր անձնագրային տվյալներ, որոնք, ըստ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունից

ստացված տվյալների, գոյություն չունեն:

- 7 Որոշ իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցներ կնքել են աշխատանքային պայմանագրեր անձանց հետ, որոնց մասով սակայն ներկայացրել են այլ անձանց դիպլոմների տվյալներ:
- 8 Օրենսդրորեն ամրագրված չեն համացանցային դեղատների գործունեության կարգավորման մեխանիզմներ:
- 9 Լիզենզավորման գործակալությունը չունի վերոնշյալ խնդիրների նկատմամբ հսկողական մեխանիզմներ:
- 10 Գործակալությունը չունի գործընթացի արդյունավետ իրականացման համար համապատասխան տեղեկատվական հոսքերին հասանելիության հնարավորություններ:

Արդյունքում՝ չի պահպանվել դեղատնային գործունեության իրականացման նպատակային արդյունավետության սկզբունքը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհրաժեշտ է, որպեսզի ստուգող և լիցենզավորող կառույցներն ունենան մեկ միասնական բազա: Լիցենզավորող մարմինը լիցենզիան տրամադրելուց առաջ պետք է ընդհանուր բազայով հնարավորություն ունենա ճշտելու, թե արդյոք հայտատուի ներկայացրած դեղագետը կամ դեղագործը աշխատում է կամ գրանցված է այլ դեղատնային կրպակում կամ դեղատանը, կամ՝ երբ է լրացել վերջիններիս վերապատրաստումը: Նման տեղեկատվական բազան կկանխարգելի հետագայում ոչ ճիշտ տեղեկատվության ներկայացումը:
2. Դեղատնային գործունեության լիցենզիա տրամադրելուց առաջ պարտադիր ուսումնասիրել պահանջվող պայմանների ճշտությունը: Ստուգաճշտումներն իրականացնել ոչ թե համակարգչային պատահական ընտրության միջոցով 80/20 տոկոս հարաբերակցությամբ, այլ՝ 100%-ով:
3. Ներդնել և կիրառել համապատասխան ընթացակարգեր՝ ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգումների իրականացման նպատակով:
4. Անհրաժեշտ է, որպեսզի Լիցենզավորման գործակալությունն ունենա հետագա վերահսկողական ֆունկցիաներ (օգտվելով տարբեր պետական մարմիններում գործընթացին առընչվող տեղեկատվական հոսքերից)՝ ստուգելու լիցենզավորված անձանց կողմից ներկայացված պայմանները, ներկայացված աշխատանքային պայմանագրերում նշված անձանց հավաստող փաստաթղթերի իսկությունը:
5. Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որի արդյունքում լիցենզավորման հանձնաժողովը իրավասու կլինի տալու դրական եզրակացություն միայն այն դեպքում, երբ վերացված կլինեն ստուգաճշտման աղյուսքում արձանագրված բոլոր թերությունները:

Համապատասխան որակավորում ունեցող ղեղազետ կամ ղեղագործ չներկայացրած սուբյեկտներ
2017թ. - 01.11.2018թ.

N/N	Անվանում	Գրանցման փաստաթղթի տեսակը	Գտնվելու վայրը	Տրման ամսաթիվ	Սերիալի համար	Համապատասխան որակավորում ունեցող ղեղազետ կամ ղեղագործ	ՀՎՀՀ
1	«Արման և ընկերներ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փողոց 11/2 հասցեափոխություն Հր.՝ 3027-Ա 20.10.2017 Երևան, Շենգավիթ Գարեգին Նժդեհի փողոց 9ա շենք, 1	11-01-17	Կ-ԴԳ-001978	Չի ներկայացրել	0821152
2	«Յունի ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 20 շենք, 93 տարածք	20-01-17	Կ-ԴԳ-001980	Չի ներկայացրել	00160113
3	Ա/Ձ Մարատ Սիմոնյան	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Վանաձոր ք. Սանկտ-Պետերբուրգի փ. 2. 12-4	20-01-17	Ա-ԴԳ-001241	Չի ներկայացրել	66948591
4	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 1/13	01-02-17	Կ-ԴԳ-001984	Չի ներկայացրել	01222567
5	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Կիլիկյան փողոց 7 շենքի տարածք	01-02-17	Կ-ԴԳ-001985	Չի ներկայացրել	01222567
6	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Ավան Բարաչանյան փողոց 21/5	03-02-17	Կ-ԴԳ-001986	Չի ներկայացրել	01222567
7	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Կայան փողոց 2 շենք, 47 ոչ բնակելի տարածք	03-02-17	Կ-ԴԳ-001987	Չի ներկայացրել	01222567
8	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Արմենի փողոց 17/1 շենք, 3 տարածք	06-02-17	Կ-ԴԳ-001988	Չի ներկայացրել	01222567
9	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Կենտրոն Արուսյան փողոց 33 շենք, 2 տարածք	06-02-17	Կ-ԴԳ-001989	Չի ներկայացրել	01222567
10	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Նոր-Նորք Գյուրջյան փողոց 10 բժշկական կենտրոն	06-02-17	Կ-ԴԳ-001990	Չի ներկայացրել	01222567

N/N	Անվանում	Գրանցման փաստաթղթի տեսակը	Գտնվելու վայրը	Տրման ամսաթիվ	Սերիալի համար	Համապատասխան որակավորում ունեցող ղեղազետ կամ ղեղազործ	ՀՀՀՀ
11	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Կենտրոն իսակովի պողոտա 3/12	07-02-17	Կ-ԴԳ-001993	Զի ներկայացրել	01222567
12	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Արմավիր, Վաղարշապատ ք. Մ. Մաշտոց փողոց 61/56 առևտրի կենտրոն	08-02-17	Կ-ԴԳ-001994	Զի ներկայացրել	01222567
13	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Նոր-Նորք Գյուլոջյան փողոց 1/2 ղեղատուն	08-02-17	Կ-ԴԳ-001995	Զի ներկայացրել	01222567
14	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Չարենցավան ք. Տերվիշյան փողոց թիվ 1 առևտրի սրահ	09-02-17	Կ-ԴԳ-001996	Զի ներկայացրել	01222567
15	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Շենգավիթ Արտաշիսյան փողոց 25/6	09-02-17	Կ-ԴԳ-001997	Զի ներկայացրել	01222567
16	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Նոր-Նորք Քոչինյան 3/15	09-02-17	Կ-ԴԳ-001998	Զի ներկայացրել	01222567
17	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Հր. Քոչար փողոց 22 շենք, 16 ոչ բնակելի տարածք	09-02-17	Կ-ԴԳ-001999	Զի ներկայացրել	01222567
18	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Չարենցավան ք. 3-րդ թաղամաս 3-րդ փողոց 1-ին փակուղի 2 շենք, 7 բացվածք	09-02-17	Կ-ԴԳ-002000	Զի ներկայացրել	01222567
19	«Արմինա Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Արուսյան ք. Հատիսի փողոց թիվ 1/24 խանութ	10-02-17	Կ-ԴԳ-002001	Զի ներկայացրել	00901923
20	«Դուստր Մանուշակ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Մեծավան Գայի փողոց 13/1 առամանաբուժարան	10-02-17	Կ-ԴԳ-002003	Զի ներկայացրել	07203028
21	Ա/Ձ Համլետ Բարսեղյան	Դեղատնային գործունեություն	Մարզ Արագածոտն, Ապարան ք. Մարշալ Բաղդասյան փողոց թիվ 12/1 խանութ	10-02-17	Ա-ԴԳ-001244	Զի ներկայացրել	55809848
22	«Էյջ Էյ Գլոբալ Ֆարմա» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Աջաինյակ Բաշինջաղյան փողոց 173 շենք, 27 ոչ բնակելի տարածք	27-02-17	Կ-ԴԳ-002007	Զի ներկայացրել	00127833
23	«Նատալի	Դեղատնային	Երևան, Աջաինյակ Ֆուչիկի փողոց 19/7	27-02-17	Կ-ԴԳ-	Զի ներկայացրել	01222567

N/N	Անվանում	Գրանցման փաստաթղթի տեսակը	Գտնվելու վայրը	Տրման ամսաթիվ	Սերիայի համար	Համապատասխան որակավորում ունեցող ղեղապետ կամ ղեղագործ	ՀՀՀՀ
	Ֆարմ» ՍՊԸ	գործունեություն			002008		
24	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Մալաթիա-Սեբաստիա Զ. Անդրանիկի փողոց 5/9	27-02-17	Կ-ԴԳ- 002009	Զի ներկայացրել	01222567
25	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Կենտրոն Երվանդ Քոչարի փողոց 9/4	27-02-17	Կ-ԴԳ-002010	Զի ներկայացրել	01222567
26	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Կենտրոն Պարոնյան փողոց 9 շենք, 42 տարածք	27-02-17	Կ-ԴԳ-002011	Զի ներկայացրել	01222567
27	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Աբովյան ք. Հանրապետության պողոտա թիվ 26/1 սպասարկման օբյեկտ և հողամաս	01-03-17	Կ-ԴԳ-002013	Զի ներկայացրել	01222567
28	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Աբովյան ք. Հատիկի փողոց թիվ 1/53 սպասարկման օբյեկտ	01-03-17	Կ-ԴԳ-002014	Զի ներկայացրել	01222567
29	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Շենգավիթ Ա. Տարոնցի փողոց 22ա շենքի մոտ	01-03-17	Կ-ԴԳ-002015	Զի ներկայացրել	01222567
30	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Նոր-Նորք Միկոյան փողոց 14/1	01-03-17	Կ-ԴԳ-002017	Զի ներկայացրել	01222567
31	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Արարատ, Արտաշատ ք. Օգոստոսի 23 փողոց 19 շենք, 27/1	01-03-17	Կ-ԴԳ-002018	Զի ներկայացրել	01222567
32	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Քանաքեռ-Զեյթուն Զ. Քանաքեռցու փողոց 72/5	02-03- 17	Կ-ԴԳ-002019	Զի ներկայացրել	01222567
33	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Արաբկիր Ա. Խաչատրյան փողոց 4 շենք, 1 ոչ բնակելի տարածք	06-03- 17	Կ-ԴԳ-002020	Զի ներկայացրել	01222567
34	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Վանաձոր ք. Երևանյան խճուղի 125 խանութ	06-03- 17	Կ-ԴԳ-002021	Զի ներկայացրել	01222567
35	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Վանաձոր ք. Վերածննդի փողոց 10գ/1 խանութ	06-03- 17	Կ-ԴԳ-002022	Զի ներկայացրել	01222567
36	«Նատայի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Վանաձոր ք. Գր. Լուսավորչի փողոց 54ա/1 խանութ	06-03- 17	Կ-ԴԳ-002023	Զի ներկայացրել	01222567

N/N	Անվանում	Գրանցման փաստաթղթի տեսակը	Գտնվելու վայրը	Տրման ամսաթիվ	Սերիայի համար	Համապատասխան որակավորում ունեցող ղեղապետ կամ ղեղազոր	ՀՀՀ
37	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Երևան, Քանաքեռ-Զեյթուն Ազատության պողոտա 24/9	06-03-17	Կ-ԴԳ-002024	Չի ներկայացրել	01222567
38	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Լոռի, Վանաձոր ք. Աղայան փողոց 78/6ա դեղատուն	06-03-17	Կ-ԴԳ-002025	Չի ներկայացրել	01222567
39	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	Դեղատնային գործունեություն	Մարզ Կոտայք, Արուսյան ք. Հատիսի փողոց 1/47/1 շինություն	06-03-17	Կ-ԴԳ-002026	Չի ներկայացրել	01222567
40	Ա/Ձ Գայանե Ավետյան	Դեղատնային գործունեություն	Մարզ Գեղարքունիք, Երանոս 11-րդ փողոց 2 բնակելի տուն	14-03-17	Ա-ԴԳ-001250	Չի ներկայացրել	74352061
